Հավելված N 477
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիս 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ձեռներեցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը ՝ 23-32.19-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները և պարտականությունները

1) կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության՝ այդ թվում նաև փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայություններին համապատասխանեցման աշխատանքները,

2) կազմակերպում է ՓՄՁ-երի աճի ներառականությունն ապահովելուն ուղղված աջակցության գործիքակազմի մշակման և ձեռներեցության աջակցության՝ պետական աջակցության ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքները,

3) մասնակցում է միջազգային համագործակցության շրջանակներում գործող ոլորտային հարթակների աշխատանքներին, քաղաքականության երկխոսություններին, ծրագրերի մշակմանը, ինչպես նաև դրանց արդյունքների գնահատման և հաշվետվողականության գործընթացներին,

4) կազմակերպում է կանանց և երիտասարդների գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծրագրերի մշակման և ներդրման աշխատանքները,

5) կազմակերպում է սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայման ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացումը.

6) կազմակերպում է ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործուն մեխանիզմների մշակման և իրականացման (մշտադիտարկման) աշխատանքները,

7) կազմակերպում է տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման հետ կապված աշխատանքները.

8) կազմակերպում է տեղական ընկերությունների բիզնես կառավարման, բրենդինգի, հանրային կապերի և միջազգայնացման, ֆինանսական պլանավորման, կորպորատիվ կառավարման սկզբունքների նորմուծման, առավել բարձր հավելյալ արժեքի ստեղծման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացմանն ուղղված առաջարկների ձևավորման և ներկայացման աշխատանքների իրականացումը,

9) մասնակցում է մասնավոր, պետական, մարզային, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,

10) մասնակցում է ոլորտային ռազմավարական փաստաթղթերի վերանայման, ինչպես նաև՝ դրանցով նախանշված նպատակների և գերակայությունների մասով բյուջետային և **միջնաժամկետ ծախսային ծրագրերի (այսուհետ՝ ՄԺԾ)** վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը,

11) կազմակերպում է Նախարարության ներքո իրականացվող երկխոսության հարթակների քարտուղարության գործառույթների իրականացումը՝ ուղղված հանրային քննարկումների և երկխոսությունների նախագծման, կազմակերպման, համակարգման, մշտադիտարկման, վերլուծության ու հաշվետվողականության ապահովմանը,

12) կազմակերպում է գործող հարթակների կողմից իրականացված աշխատանքների, ձեռքբերումների և բացերի, ինչպես նաև դրանց բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

13) կազմակերպում է մասնակցությունը նախարարարության ներքո թմատիկ, ոլորտային և ժամանակոր երկխոսության հարթակների ձևավորման և դրանց գործունեության արդյունավետության բարձրացման և համակարգման աշխատանքներին.

14) կազմակերպում է պետություն–մասնավոր երկխոսության հարթակի շրջանակում փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով իրազեկումներ, հանդիպումներ և սեմինարներ, ինչպես նաև տարեկան բարձր մակարդակի հանդիպումներ և համաժողովներ, այդ թվում նաև միջազգային գործընկերների ներգրավմամբ:

Իրավունքները՝

- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից պահանջել ոլորտային առաջարկություններ, հիմնավորումներ, փաստաթղթեր և այլ նյութեր.
- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից պահանջել իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ.
- հրավիրել աշխատանքային քննարկումներ ոլորտային զարգացման ծրագրեր իրականացնող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ համագործակցության առանձին ուղղությունների վերաբերյալ.
- պահանջել պետություն-մասնավոր երկխոսությունում գործարար միությունների և ոլորտային ասոցիացիաների ակտիվ ներգրավման և արդյունավետ համագործակցության զարգացման վերաբերյալ առաջարկություններ և տեղեկատվություն,
- հրավիրել խորհրդակցություններ և քննարկումներ Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների մասնակցությամբ, պահանջել տրամադրել տեղեկություններ, առաջարկություններ, կարծիքներ.
- մասնակցել նախարարության համակարգման ոլորտներին առնչվող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ վարչության իրավասություններին առնչվող հանդիպումներին և քննարկումներին:

Պարտականությունները՝

- հանձնարարել և հետևել Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության այդ թվում նաև ՓՄՁ-երի զարգացման պետական քաղաքականության մշակման և տնտեսության գերակայություններին համապատասխանեցման աշխատանքներին, պարբերաբար ստուգել դրանց ընթացքը, ամփոփել և գնահատել արդյունքները.
- հանձնարարել և վերահսկել ՓՄՁ-երի աճի ներառականությանն ուղղված՝ յուրաքանչյուր անձի կարողությունների զարգացման և աճի արդյունքում ստեղծված տնտեսական հնարավորությունների հավասար հասանելիության աջակցության գործիքակազմի մշակման աշխատանքները, ստուգել և ամփոփել արդյունքները.
- նախաձեռնել, հանձնարարել և վերահսկել պետական աջակցության ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքները, պարբերաբար ուսումնասիրել արդյունքները, անհրաժեշտության դեպքում առաջարկել լուծումներ, տալ ցուցումներ.
- հանդես գալ որպես կոնտակտային պատասխանատու միավոր՝ միջազգային համագործակցության շրջանակներում գործող ոլորտային հարթակների աշխատանքներում,

քաղաքականության երկխոսություններում, ծրագրերի մշակման, ինչպես նաև դրանց արդյունքների գնահատման և հաշվետվողականության գործընթացներում,

- նախաձեռնել, պարբերաբար ուսումնասիրել և ամփոփել կանանց և երիտասարդների գործարար ներուժի զարգացմանն ու խթանմանը միտված թիրախային աջակցության ծագրերի մշակման և ներդրման աշխատանքները,
- հանձնարարել, հետևել և գնահատել սկսնակ ձեռներեցների աջակցության գործիքակազմի ընդլայման, ինչպես նաև ճգնաժամանային և հետճգնաժամային իրավիճակներում ձեռներեցության դիմակայունության բարձրացմանն ուղղված աջակցության գործուն մեխանիզմների մշակման աշխատանքները,
- վերահսկել, ստուգել և գնահատել տեղական ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորմանն, արտահանման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները,
- հանձնարարել, հետևել և գնահատել տեղական ընկերությունների բիզնես կառավարման, բրենդինգի, հանրային կապերի և միջազգայնացման, ֆինանսական պլանավորման, կորպորատիվ կառավարման սկզբունքների ներմուծման, առավել բարձր հավելյալ արժեքի ստեղծման և այլ գործընթացներում ձեռներեցության սուբյեկտների կարողությունների զարգացմանը ուղղված աշխատանքները,
- ուսումնասիրել մասնավոր, պետական, մարզային, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների ընթացքը և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն, դիտարկումներ, կարծիքներ և առաջարկություններ,
- ուսումնասիրել ոլորտային ռազմավարական փաստաթղթերը և ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ դրանց վերանայման, ինչպես նաև՝ դրանցով նախանշված նպատակների և գերակայությունների մասով բյուջետային և ՄԺԾ ծրագրերի վերաբերյալ.
- հետևել և վերահսկել Նախարարության ներքո իրականացվող երկխոսության հարթակների քարտուղարության աշխատանքները՝ ուղղված հանրային քննարկումների և երկխոսությունների նախագծմանը, մշտադիտարկմանը, վերլուծությանն ու հաշվետվողականությանը,
- հետևել և գնահատել գործող երկխոսության հարթակներում կատարված աշխատանքները, ձեռքբերումները և բացերը, ներկայացնել առաջարկություններ դրանց բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ.
- պարբերաբար ուսումնասիրել Նախարարության ներքո իրականացվող թեմատիկ, ոլորտային և ժամանակավոր երկխոսության հաիթակների քարտուղարության այն աշխատանքները, որոնք ամբողջությամբ ուղղված են հանրային քննարկումների և երկխոսությունների նախագծմանը, մշտադիտարկմանը, վերլուծությանն ու

հաշվետվողականությանը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված.

- հետևել և վերահսկել պետություն–մասնավոր երկխոսության շրջանակներում փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով իրազեկման, հանդիպումների և սեմինարների, ինչպես նաև տարեկան բարձր մակարդակի հանդիպումների և համաժողովների աշխատանքները,
- հետևել ձեռնարկատիրության ոլորտի պարբերական հետազոտման և մոնիտորինգի, ինչպես նաև այլ գերատեսչություններից ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացման աշխատանքներին, պետություն-մասնավոր հատված երկխոսությանը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: